«Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ

2007 ԹՎԱԿԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ì º ðÈàôÌ ² Î ² Ü î º Ô º Î ² Üø

ÐÐ Ð ² Üð ² ÚÆÜ Ì ² è ² ÚàôÂÚàôÜÜ º ðÀ Î ² ð ¶ ² ì à ð àÔ Ð ² ÜÒÜ ² ÄàÔà ì

ԵՐԵՎԱՆ 2008

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն վերլուծական տեղեկանքը կազմվել է հաշվի առնելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 2007-2009 թվականների համար ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ 2007 թվականի ապրիլի 10-ի №167Ա որոշմամբ (2007 թվականի հոկտեմբերի 23-ի N04-ՎԱ-05/5407 գրությամբ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն դիմել էր հանձնաժողով 2007-2009 թվականի ներդրումային ծրագրի 2007 թվականի ներդրումների ծավալում փոփոխություններ կատարելու համար: Առաջարկվող փոփոխությունները նույնպես հաշվի են առնվել սույն վերլուծական տեղեկանքում:) համաձայնեցված ներդրումային ծրագրի շրջանակներում 2007 թվականին իրականացված փաստացի ներդրումների վերաբերյալ ընկերության 2008 թվականի մայիսի 30-ի №05-ԵԳ-05/2830 գրությամբ ներկայացված հաշվետվությունը:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ
2007 թվականի ներդրումային ծրագիրը

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2007 թվականի տարեկան ներդրումային ծրագիրը հանդիսանում է ընկերության 2007-2009 թվականների եռամյա ներդրումային ծրագրի բաղկացուցիչ մասը: Ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսված է տարբեր միջոցառումներ իրականացնել բաշխիչ ցանցերի վերակառուցման և վերազինման ուղղությամբ՝ սպառողների սպասարկման որակի ցուցանիշների, ինչպես նաև հուսալիության և անվտանգության աստիճանի բարձրացման նպատակով: Նախատեսված է ներդրումներ իրականացնել նաև բաշխիչ ցանցերի ընդլայնման, այլ նաձանց պատկանող ցանցերի ձեռքբերման, ընթացիկ ծախսերի կրճատման, բաշխիչ ցանցերի շահագործման կազմակերպման և ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով, համակարգչային տեխնիկայի, տնտեսական գույքի, արտադրական և տնտեսական գործիքների ձեռքբերման ուղղություններով:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2007-2009 թվականների ներդրումային ծրագրին համաձայնություն էր տվել իր 2007 թվականի ապրիլի 10-ի №167Ա որոշմամբ: Ներդրումային ծրագրով նախատեսված էր 2007-2009 թվականների ընթացքում

իրականացնել 26 961,9[1] մլն դրամի ներդրումներ, որից 12 207,0 մլն դրամը՝ 2007 թվականի ընթացքում: 2007 թվականի հոկտեմբերի 23-ի N04-ՎԱ-05/5407 գրությամբ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն դիմել էր հանձնաժողով 2007-2009 թվականի ներդրումային ծրագրի 2007 թվականի ներդրումների ծավալում փոփոխություններ կատարելու համար: Առաջարկված փոփոխությունները, համաձայն հանձնաժողովի 30.11.2007թ. ՈՌՆ-2310Լ գրության՝ բացառությամբ բաշխիչ ցանցերի շահագործման կազմակերպման և ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով նախատեսված ներդրումների 7-րդ հավելվածում առաջարկվող փոփոխությունների, նույնպես հաշվի են առնվել սույն վերլուծական տեղեկանքում: Այսպիսով 2007 թվականի ընթացքում ընկերությունը նախատեսում էր իրականացնել 10 911,9 մլն դրամի ներդրումներ:

Գրաֆիկ 1-ում ներկայացված է ընկերության 2007 թվականի ներդրումային ծրագրի ծավալների բաշխումը հիմնական ուղղությունների միջև՝ ըստ դրանց նպատակային առանձնահատկությունների:

¶ð²üÆÎ 1



[1] Սույն վերլուծական տեղեկանքում ներկայացված բոլոր գումարները չեն ներառում ավելացված արժեքի հարկը:

Ինչպես երևում է գրաֆիկ 1-ից, ներդրումների հիմնական մասը՝ շուրջ 56 %-ը, նախատեսված է սպասարկման որակի ցուցանիշների բարելավման նպատակով ուղղել մալուխային և օդային գծերի ու ենթակայանների վերակառուցմանը, վերազինմանը և նորերի կառուցմանը:

Հաշվառման համակարգի բարելավմանն ուղղված ներդրումները իրենց տեսակարար կշռով երկրորդն են: Այդ նպատակով պետք է փոխարինվեին կամ տեղակայվեին նոր հաշվիչներ և հաշվիչների արկղեր՝ էլեկտրաէներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով, դրանց ներկայացվող պահանջների ապահովման նպատակով: Նախատեսվում էր նաև տեղակայված հաշվիչների կապիտալ վերանորոգման ինչպես նաև 0.4 և 6(10) կՎ լարման ցանցերում հաշվառման համակարգի ավտոմատացման աշխատանքներ:

Ներդրումների մյուս խոշոր ուղղությունը անվտանգության տեխնիկայի ապահովման և մաշված սարքավորումների փոխարինման ուղղությունն է: Այս ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 950.9 մլն դրամ՝ ընդհանուրի 8.7%-ը:

200 մլն դրամ՝ ընդհանուրի 1.8%-ը նախատեսվում էր ներդնել բաշխիչ ցանցերի ընդլայնման և այլ անձանց պատկանող ցանցերի ձեռք բերման ուղղությամբ:

60 մլն դրամ ընդհանուր ծավալով ներդրումներ էր նախատեսվում կատարել բաժանորդների հետ կապի կենտրոնի ստեղծման համար համակարգիչների, ծրագրերի, կահույքի և բջջային հեռախոսների ձեռքբերման համար:

Ներդրումային ծրագրի մյուս ուղղություններով նախատեսված ներդրումները, որոնք կազմում են ընդհանուրի 9.6%-ը, պետք է իրականացվեին վարչական շենքերի վերակառուցման, մեքենա-մեխանիզմների, գրասենյակային գույքի, համակարգչային տեխնիկայի, հաշվապահական հաշվառման և կառավարման ծրագրերի ձեռքբերման ինչպես նաև բաժանորդների հետ կապի կենտրոնի ստեղծման ուղղությամբ: Նշված բոլոր ուղղությունները բացառությամբ համակարգչային տեխնիկայի և աքսեսուարների ձեռք բերման ուղղությամբ ներդրումները գերակատարվել են: Արդյունքում այս ուղղություններով նախատեսված 1051.0 մլն դրամի դիմաց 2007 թվականի ընթացքում իրականացվել են 1402.3 մլն դրամի ներդրումներ:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ
2007 թվականի ներդրումային գործունեության արդյունքները

Համաձայն «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի փաստացի իրականացված ներդրումների մասին հաշվետվության, ընկերությունը 2007 թվականի

ընթացքում կատարել է 13 431,9 մլն դրամի ներդրումներ[2], որի արդյունքում շահագործման են հանձնվել 11 993,9 մլն դրամի հիմնական միջոցներ: Մնացած 1438,0 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ:

Ստորև՝ աղյուսակ 1-ում, ներկայացված է ընկերության կողմից փաստացի իրականացված և հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալների համեմատականը:

ԱՂՅՈՒՍԱԿ 1

N	Ներդրումային ծրագրի ուղղությունը, ենթաուղղությունը	Հանձնաժողովի հետ համաձայնեցված 2007 թվականի ներդրումների կանխատեսվող ծավալը		2007 թվականի ընթացքում փաստացի կատարված ներդրումների ծավալը		Ներդրում-ային ծրագրի կատարման ցուցանիշը
		մլն դրամ	%*	մլն դրամ	%*	%
1	2	3	4	5	6	7
1	Սպասարկման որակի ցուցանիշների բարելավում	6 111.4	56%	6 999.1	52%	114.5%
2	Անվտանգության տեխնիկայի ապահովման և մաշված սարքավորումների փոխարինում	950.9	9%	1 004.6	7%	105.6%
3	Բաշխիչ ցանցերի ընդլայնում	200.0	2%	237.9	2%	118.9%
4	Հաշվառման համակարգի բարելավում	2 538.7	23%	3 234.1	24%	127.4%
5	Բաժանորդների հետ կապի կենտրոնի ստեղծում	60.0	1%	36.0	0%	60.0%
6	Գրասենյակային գույքի ձեռքբերում	50.0	0.5%	71.3	1%	142.7%
7	Մեքենա մեխանիզմների ձեռքբերում	275.8	3%	308.3	2%	111.8%
8	Համակարգչային տեխնիկայի և աքսեսուարների ձեռքբերում	134.7	1%	68.7	1%	51.0%
9	Հաշվապահական հաշվառման և կառավարման նոր ծրագրային փաթեթի ձեռքբերում	140.0	1%	197.7	1%	141.2%
10	Շենքերի և շինությունների վերակառուցում	400.0	4%	651.6	5%	162.9%
11	Այլ	50.5	0.5%	104.6	1%	207.2%
12	Հրատապ ներդրումներ			216.5	2%	
13	Ներդրումային ծրագրով չնախատեսված ներդրումներ և անհատույց ստացված հիմնական միջոցներ			301.7	2%	
14	**Ընդամենը**	**10 911.9**	**100%**	**13 432.3**	**100%**	**123.1%**

[2] 2007 թվականի ընթացքում իրականացված ներդրումների ծավալում ներառված են նաև նախորդ ժամանակաշրջանում իրականացված 925,5 մլն դրամի աշխատանքները, որոնք շահագործման են հանձնվել 2007 թվականին:

ԱՂՅՈՒՍԱԿ 2

	Ներդրումների ձևավորման աղբյուրները	Իրականացված ներդրումների ծավալները
1	2	3
1	Նախորդ ժամանակահատվածում իրականացված ներդրումներից	925.5
2	Կողմնակի կազմակերպությունների միջոցով կատարված աշխատանքներից	5779.5
3	Տեղակայում չպահանջող հիմնական միջոցներից	3831.0
4	Սեփական ուժերով կատարված աշխատանքներից	2896.3
4.1	³ßË ³ ï ³ í ³ ñÓ ¨ ëáóÇ ³É ³ Ï ³ Ý ³ å ³ ÑáíáõÃÛ ³ Ý Í ³ Ëë»ñ	822.4
4.2	ÑáõÙù ¨ ÝÛáõÃ»ñ	1864.9
4.3	ï »Õ ³ Ï ³ ÛÙ ³ Ý »ÝÃ ³ Ï ³ ë ³ ñù ³ íáñáõÙÝ»ñ	208.9
4.4	³ ÛÉ	0.0
5	ԸՆԴԱՄԵՆԸ	13432.3

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 2-ից, ընկերությունը 2007 թվականին ներդրումների իրականացման նպատակով ներգրավել է 13432.3 մլն դրամ, որից 925.5 մլն դրամը նախորդ ժամանակաշրջանում իրականացված ներդրումներն են: Ներդրումների 43%-ը, իրականացվել է այլ կազմակերպությունների միջոցով: Սեփական ուժերով կատարված ներդրումների ծավալը կազմել է ընդհանուրի մոտ 22%-ը:

Սփոռն, առավել հանգամանալից ըստ ուղղությունների, ներկայացված են ընկերության կողմից 2007 թվականին իրականացված ներդրումների ծավալները հետագայում դրանք սակագնով ամբողջությամբ կամ մասնակի փոխհատուցման տեսանկյունից: Հարկ ենք համարում նշել, որ սույն վերլուծական տեղեկանքում սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ներկայացված ծավալը վերջնական չէ և հետագայում կարող է ճշգրտվել մոնիթորինգի իրականացման արդյունքներով:

Հարկ ենք համարում նշել, որ իրականացված ներդրումների ծավալում առկա են այնպիսի աշխատանքներ, որոնք չեն ընդունվել հանձնաժողովի աշխատակազմի կողմից՝ մասնավորապես.

1. ընկերության 4 մասնաճյուղերում իրականացված 325 մլն դրամ ընդհանուր ծավալով ասֆալտապատման աշխատանքներից նվազեցվել են 171.14 մլն

դրամի ներդրումները՝ հաշվի առնելով այդ մասնաճյուղերի (վարչական շենքերի) փարածքները և ասֆալտապատման աշխատանքների գները,

2. արտաքին լուսավորության աշխատանքները՝ 68.58 մլն դրամ ընդհանուր ծավալով, քանի որ դրանք չեն բխում ընկերության լիցենզավորված գործունեությունից,
3. 17.1 մլն դրամ ընդհանուր արժեքով 4 աշխատանքներ, որոնց իրականացման վայրի և բնույթի վերաբերյալ ընկերությունը հիմնավորումներ չի ներկայացրել,
4. 458 անվանում մինչև 25000 դրամ արժեքով աշխատանքները ընդհանուր 7.83 մլն դրամ ծավալով, քանի որ անհասկանալի է այդ աշխատանքների որպես ներդրում դիտարկելու հանգամանքը,
5. 2007 թվականի ընթացքում ձեռք բերված 683.7 մլն դրամի հաշվիչների արկղերի արժեքից 288.6 մլն դրամը՝ հաշվի առնելով դրանց հաշվապահական հաշվառման տվյալների հետ համադրության և արկղերի ձեռքբերման արժեքների ուսումնասիրության արդյունքները,
6. սպառողների հաղորդալարերի և պատյանների փոխարինման ուղղությամբ իրականացված 21.1 մլն դրամ ներդրումները, որոնց իրականացման վայրերի և ծավալների վերաբերյալ ընկերությունը տեղեկատվություն չի ներկայացրել,
7. անհատույց ստացված հիմնական միջոցների արժեքը՝ 57.1 մլն դրամ,
8. հրատապ ներդրումների ծավալը՝ 76.7 մլն դրամ, քանի որ դրանք սահմանված կարգով չեն հիմնավորվել,
9. ներդրումային ծրագրով չնախատեսված ներդրումները՝ 74.2 մլն դրամ:

Այսպիսով սակագնային մարժայով փոխհատուցվող ներդրումների ծավալի որոշման ժամանակ ներդրումների ընդհանուր ծավալից ենթակա է նվազեցման 782.3 մլն դրամ:

Սպասարկման որակի բարելավմանն ուղղված ներդրումները

Այս ուղղությամբ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2007 թվականի ներդրումային գործունեության արդյունքները համակողմանի և համապարփակ գնահատելու նպատակով կատարվել է այդ ժամանակահատվածում սպառողների սպասարկման որակի ցուցանիշների համեմատություն 2007 թվականի ծրագրային և 2006 թվականի ցուցանիշների հետ:

Սպասարկման որակի բարելավման նպատակով ընկերության 2007 թվականի ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսվում էր իրականացնել 6111.4 մլն

դրամի ներդրումներ՝ բաշխիչ ցանցերի լարման տարբեր մակարդակներում օդային և մալուխային գծերի, ենթակայանների վերանորոգման, վերակառուցման և նորերի կառուցման նպատակով: Հաշվի առնելով նշված ներդրումների ծավալները հաստատվել էին սպասարկման որակի ցուցանիշների ծրագրային մեծությունները, որոնք ենթադրում էին բոլոր սպասարկման որակի ցուցանիշների գրեթե հավասարաչափ բարելավում՝ 3-4%-ով 2006 թվականի նկատմամբ: Այդ ժամանակահատվածում ընկերությունը ներդրել է 6999.1 մլն դրամ գումար, սակայն ոչ բոլոր աշխատանքներն են ավարտվել. իրականացված ներդրումների արդյունքում շահագործման են հանձնվել 6279.6 մլն դրամի հիմնական միջոցներ, (նշված ծավալում 740.7 մլն դրամի աշխատանքները նախորդ ժամանակաշրջանում իրականացված աշխատանքներն են) որոնք և կարող էին ազդեցություն ունենալ սպասարկման որակի ցուցանիշների վրա: Հարկ ենք համարում նշել նաև, որ այս ուղղությամբ նախանշված ներդրումները ծրագրայինը գերազանցել են 672.9 մլն դրամով:

Ստորև ներկայացվում է 2007 թվականի ընթացքում սպառողների հոսանքազրկումների միջին հաճախության և տևողության ցուցանիշների համեմատությունը 2006 թվականի փաստացի և 2007 թվականի ծրագրային ցուցանիշների հետ:

ԱՂՅՈՒՍԱԿ 3

Սպասարկման տարածքը	Չափի միավոր	2006թ. փաստացի	2007թ. ծրագրային	2007թ. ծրագրայինի փոփոխությունը 2006թ. փաստ-ի նկատմամբ	2007թ. փաստացի	2007թ.փաստ-ի փոփոխությունը 2006թ. փաստ-ի նկատմամբ	2007թ. փաստ-ի փոփոխությունը 2007թ. ծրագրայինի նկատմամբ
միջին հաճախություն							
Հայաստանի Հանրապետություն	**հոսանքազրկում / սպառող**	**5.72**	**5.55**	**3.0%**	**5.85**	**-2.3%**	**-5.4%**
ք. Երևան	հոսանքազրկում / սպառող	6.78	6.58	**2.9%**	6.47	**4.6%**	**1.7%**
ՀՀ մարզեր	հոսանքազրկում / սպառող	5.14	4.99	**2.9%**	5.52	**-7.4%**	**-10.6%**
միջին տևողություն							
Հայաստանի Հանրապետություն	**րոպե / սպառող**	**938.5**	**907.1**	**3.3%**	**993.04**	**-5.8%**	**-9.5%**
ք. Երևան	րոպե / սպառող	695.76	670.8	**3.6%**	673.88	**3.1%**	**-0.5%**
ՀՀ մարզեր	րոպե / սպառող	1069.59	1035.4	**3.2%**	1165.07	**-8.9%**	**-12.5%**
լարման շեղման միջին							
Հայաստանի Հանրապետություն	**շեղում / սպառող**	**16.77**	**16.16**	**3.6%**	**15.36**	**8.4%**	**5.0%**
ք. Երևան	շեղում / սպառող	13.61	13.22	**2.9%**	10.49	**22.9%**	**20.7%**
ՀՀ մարզեր	շեղում / սպառող	18.47	17.75	**3.9%**	17.99	**2.6%**	**-1.4%**
լարման շեղման միջին							
Հայաստանի Հանրապետություն	**ժամ / սպառող**	**2963.3**	**2835.7**	**4.3%**	**2720.01**	**8.2%**	**4.1%**
ք. Երևան	ժամ / սպառող	2370.01	2290.4	**3.4%**	1815.13	**23.4%**	**20.8%**
ՀՀ մարզեր	ժամ / սպառող	3283.71	3132.2	**4.6%**	3207.79	**2.3%**	**-2.4%**

Ինչպես նշեցինք 2007 թվականի ընթացքում նախատեսվում էր սպասարկման որակի ցուցանիշների 3-4%-ով բարելավում: Սպառողների հոսանքազրկումների

հաճախության ցուցանիշը Հայաստանի Հանրապետության տարածքի համար նախատեսվում էր կրճատել 3%-ով: Սակայն 2007 թվականի ընթացքում այս ցուցանիշը ոչ թե բարելավվել է, այլ ընդհակառակը՝ վատթարացել: Նշենք, որ վատթարացումը տեղի է ունեցել ի հաշիվ մարզերում սպառողների հոսանքազրկումների հաճախության ցուցանիշի ավելի քան 7%-ով անկման: Ինչ վերաբերում է Երևան քաղաքի սպառողների հոսանքազրկումների հաճախության ցուցանիշին ապա այն բարելավել է և նույնիսկ գերազանցել է ծրագրային մեծությունը: Սպառողների հոսանքազրկումների տևողության ցուցանիշը, որը Հայաստանի Հանրապետության տարածքի համար նախատեսվում էր կրճատել 3.3%-ով, նույնպես վատթարացել է, և նույնպես ի հաշիվ մարզերում այդ ցուցանիշի զգալի՝ 9% անկմամբ: Այս դեպքում ևս Երևան քաղաքի ցուցանիշը բարելավել է:

Ինչ վերաբերում է լարման շեղման հաճախությունների և տևողության ցուցանիշներին, դրանք և Երևան քաղաքի և մարզերի դեպքում բարելավվել են: Եթե մարզերի պարագայում այդ ցուցանիշները չեն հասել ծրագրայինին և կազմել են համապատասխանաբար 2.6% և 2.3%, ապա Երևան քաղաքի համար այդ ցուցանիշները և հաճախության և տևողության պարագայում բարելավվել են մոտ 23%-ով:

Այս առնչությամբ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն հանձնաժողով է ներկայացրել սպասարկման որակի ծրագրային և փաստացի ցուցանիշների շեղումների իր հիմնավորումները որոնք հետևյալն են.

1. ներդրումների իրականացման նպատակով աճել են պլանային և արտապլանային անջատումների քանակը,
2. որոշ մասնաճյուղերում տարերային աղետներով պայմանավորված ընդհատումները դասվել են ընկերության էլեկտրակայանքների հրաժարման հետևանքով անջատումների թվին,
3. 2004-2006 թվականների բազային տվյալների ցածր հավաստիությունը:

Ներկայացված պատճառների հիմնավորվածությունը պարզելու նպատակով իրականացված ներդրումները ուսումնասիրվել են ըստ տարածաշրջանների և ընդհատումների պատճառների:

Ստորև ներկայացվում է 2007 թվականի ընթացքում ընդհատումների տևողության և քանակի ցուցանիշների համեմատությունը 2006 թվականի հետ:

ԱՂՅՈՒՍԱԿ 4

ընդհատումների տևողությունը												
Ժամանակա հատված	Երևան						Մարզեր					
	1	2	3	4	5	6	1	2	3	4	5	6
2006թ.	101.92	33.43	560.41	21.00			103.73	61.04	904.82	37.59		
2007թ.	57.08	26.03	590.77	19.65	0.45	9.39	119.23	158.86	886.99	23.36	11.06	44.64
ընդհատումների քանակը												
2006թ.	0.83	0.22	5.73	0.26			0.64	0.45	4.05	0.17		
2007թ.	0.54	0.20	5.73	0.34	0.00	0.01	0.76	0.86	3.90	0.13	0.05	0.12

Աղյուսակում բերված 1-ից 6 թվերը ընդհատումների պատճառներն են, որոնք ներկայացվում են ստորև.

1. մատակարարի բաշխիչ ցանցի էլեկտրականքի պլանային նորոգման պատճառով,
2. մատակարարի բաշխիչ ցանցի էլեկտրականքի արտահերթ նորոգման պատճառով,
3. մատակարարի բաշխիչ ցանցի էլեկտրականքի հրաժարման պատճառով,
4. այլ ընկերությունների պատճառով՝ բացառությամբ սպառողների,
5. սպառողների պատճառով,
6. մատակարարի գործունեության վրա ազդեցություն ունեցած ֆորս-մաժորի պատճառով,

Համաձայն ներկայացված հաշվետվության սպառողների ընդհատումների քանակի և տևողության կրճատման ուղղությամբ 2007 թվականի ընթացքում ներդրվել է 5166.6 մլն դրամ, որից 3045.7 մլն դրամը Երևանում իսկ մնացած 2121 մլն դրամը մարզերում: Եթե համեմատենք 2007 թվականին պլանային և արտահերթ նորոգման պատճառով անջատումների քանակը 2006 թվականի հետ, ապա կտեսնենք, որ Երևանում իրականացվել է ներդրումների մոտ 60%-ը, սակայն պլանային և արտահերթ նորոգումների հետևանքով անջատումները 2006 թվականի համեմատությամբ նվազել են: Իսկ մարզերում պատկերը հակառակն է. ներդրումների քանակը ավելի քիչ է քան Երևանում, սակայն պլանային և արտահերթ նորոգման պատճառով անջատումների քանակը աճել է: Այս համեմատությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ընկերության կողմից իրականացված ներդրումների արդյունքում չէ, որ աճել է պլանային և արտահերթ նորոգումների պատճառով ընդհատումների քանակը:

Հաջորդ պատճառաբանությունը վերաբերում էր մի շարք մասնաճյուղերում տարերային աղետներով պայմանավորված ընդհատումները ընկերության էլեկտրակայանքների հրաժարման հետևանքով անջատումների թվին դասելուն, որի առնչությամբ ընկերությունը նշեց, որ որևէ հիմնավորում ներկայացնել չի կարող:

Ինչ վերաբերում է 3-րդ պատճառաբանությանը, ապա հարկ ենք համարում նշել, որ ընկերությունը բազմիցս վստահեցրել է, թե ներկայացվող տվյալները ունեն բարձր հավաստիության աստիճան: Ուստի ընկերության ուշադրությունն ենք հրավիրում այս հանգամանքի վրա և կարծում ենք, որ ընկերությունը բավարար ջանքեր չի գործադրել այս ուղղությամբ իրականացվող աշխատանքները հավուր պատշաճին կատարելու համար, ինչը և պատճառ է հանդիսանում նման իրարամերժ հայտարարությունների համար:

Ամփոփելով այս ուղղությամբ իրականացված ներդրումների արդյունքները նշենք, որ չնայած իրականացված ներդրումների ծավալին սպասարկման որակի ցուցանիշները չէն բարելավվել: Ուստի առաջարկում ենք ծրագրային ներդրումների գերազանցող ծավալը՝ 672.9 մլն դրամ, նվազեցնել սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Հաշվառման համակարգի վերազինման ուղղությամբ կատարված ներդրումները

Ներդրումային ծրագրի հաջորդ՝ հաշվառման համակարգի վերազինման ուղղությամբ նախատեսվում էր իրականացնել 2538.7 մլն դրամի ներդրումներ: Այդ նպատակով պետք է փոխարինվեին հետագա շահագործման համար անպիտան հաշվիչները, կատարելագործվեր առևտրային հաշվառման համակարգը և տեղակայվեին հաշվիչների նոր արկղեր՝ հաշվառման սարքերի մեխանիկական վնասվածքները և կողմնակի անձանց միջամտությունը դրանց միացման սխեմային կամ աշխատանքին բացառելու, ինչպես նաև սպառողների և ընկերության ներկայացուցիչների համար հաշվիչի ցուցմունքի տեսանելիությունը՝ դրանց շահագործման և պահպանման անվտանգությունը ապահովելու նպատակով: Նախատեսվում էր նաև իրականացնել հաշվիչների կապիտալ նորոգման աշխատանքներ 550 մլն դրամ ընդհանուր արժեքով:

Համաձայն ներկայացված հաշվետվության, այս ուղղությամբ ընկերությունն իրականացրել է 3234.1 մլն դրամի ներդրումներ, այդ թվում՝

- հաշվիչների փոխարինման նպատակով՝ 1545.5 մլն դրամ, որից 1318.3 մլն դրամը սպառողների համար միաֆազ էլեկտրոնային բազմասակագնային հաշվիչների տեղադրման նպատակով: Հարկ ենք համարում նշել, որ այս

ներդրումները «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով» սահմանված կարգով հիմնականում իրականացվում են սպառողների միջոցների հաշվին, իսկ ընկերությունը դրանք փոխհատուցում է հաշվիչը սպառողի մոտ տեղակայելուց մեկ տարի հետո՝ էլեկտրական էներգիայի ծախսի հաշվին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ միաֆազ բազմասակագնային էլեկտրոնային հաշվիչների տեղակայումը իրականացվում է բաժանորդների նախաձեռնությամբ և ընկերությունը այս ուղղությամբ ճշգրիտ կանխատեսումներ կատարել չեր կարող, առաջարկում ենք այս ենթաուղղությամբ ներդրումների գերազանցող մասը չնվազեցնել սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

- սպառողների մոտ տեղակայված հաշվիչների կապիտալ նորոգման նպատակով՝ 652.5 մլն դրամ:
- հաշվիչների արկղերի տեղադրման նպատակով՝ 683.7 մլն դրամ,
- 0.4 և 6(10) կՎ լարման ցանցերում ցանցերում էլեկտրական էներգիայի ավտոմատ հաշվառման համակարգի համալրման նպատակով՝ 352.5 մլն դրամ, որից ավարտվել են 278.7 մլն դրամի աշխատանքները:

Ամփոփելով հաշվառման համակարգի բարելավմանն ուղղված ներդրումների ծավալի ներկայացումը, նշենք, որ ընկերությունն այդ նպատակով կատարել է ավելի մեծ ծավալի ներդրումներ, քան նախատեսված էր ներդրումային ծրագրով. փաստացի կատարված ներդրումների ծավալը կազմել է ծրագրայինի 127.4%-ը: Հաշվառման համակարգի բարելավման ուղղությամբ իրականացված ներդրումների ծավալում առկա են ծրագրայինը գերազանցող չհիմնավորված ներդրումներ, որոնք ենթակա են նվազեցման սակագնային մարժայով փոխհատուցվող ներդրումների ծավալից, մասնավորապես.

եռաֆազ իդուկցիոն հաշվիչների ձեռք բերում՝ 1 մլն դրամ,

հաշվիչների կապիտալ նորոգում՝ 102.5 մլն դրամ:

Բաշխիչ ցանցերի ընդլայնման ուղղությամբ կատարված ներդրումները

Բաշխիչ ցանցերի ընդլայնման ուղղությամբ ներդրումային ծրագրով նախատեսվում էր 200 մլն դրամի ներդրումներ իրականացնել Ծաղկաձոր քաղաքի ցանցի ընդլայնման, Երևան քաղաքի Դուրյան թաղամասի հարակից տարածքի էլեկտրամատակարարման և այլ անձանց պատկանող ցանցերի ձեռք բերման ուղղությամբ: 2007 թվականի ընթացքում փաստացի ներդրվել է 237,9 մլն դրամ, որից

Ծաղկաձոր քաղաքի ցանցի ընդլայնման ուղղությամբ 60,4 մլն դրամ արժեքով աշխատանքները հանձնվել են շահագործման: մնացած 177.5 մլն դրամի աշխատանքները, որոնք իրականացվել են Դուրյան թաղամասի հարակից փարածքի էլեկտրամատակարարման ուղղությամբ դեռևս անավարտ են:

Անվտանգության տեխնիկայի ապահովման և մաշված սարքավորումների փոխարինման ուղղությամբ կատարված ներդրումներ

Ներդրումների մյուս խոշոր ուղղությունը անվտանգության տեխնիկայի ապահովման և մաշված սարքավորումների փոխարինման ուղղությունն է: Այս ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 950.9 մլն դրամ՝ ընդհանուրի 8.7%-ը: Փաստացի ներդրվել է 1004.6 մլն դրամ, որի արդյունքում 938.5 (22.4 մլն դրամի աշխատանքները նախորդ ժամանակաշրջանում իրականացված աշխատանքներն են) մլն դրամի աշխատանքներ հանձնվել են շահագործման: Արդյունքում լարման տարբեր մակարդակներում փոխարինվել են ուժային տրանսֆորմատորներ և այլ շահագործման համար ոչ պիտանի սարքավորումներ, վերակառուցվել են օդային գծեր: Այս ուղղությամբ ծրագրայինի նկատմամբ գերազանցումների ծավալը կազմել է 99.1 մլն դրամ, որը ընկերությունը հիմնավորել է ԷՄՕԿ-ի պահանջներին ենթակայանների բավարարման համար լրացուցիչ ներդրումների իրականացման անհրաժեշտությամբ, որը առաջարկում ենք հաշվի առնել սակագնային մարժայով փոխհատուցվման ենթակա ներդրումների ծավալում:

Բաժանորդների հետ կապի կենտրոնի ստեղծմանն ուղղված ներդրումներ

Բաժանորդների հետ կապի կենտրոնի ստեղծման ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 60 մլն դրամ՝ համակարգիչների, ծրագրերի, կահույքի և բջջային հեռախոսների ձեռքբերման համար: 2007 թվականի ընթացքում փաստացի ներդրվել է 36 մլն դրամ, որի արդյունքում ձեռք են բերվել 1992 բջջային հեռախոսներ:

Այլ ուղղություններով կատարված ներդրումները

Ներդրումային ծրագրի մնացած ուղղություններով նախատեսվում էր.

- վարչական շենքերի վերակառուցման նպատակով ներդնել 400 մլն դրամ: Փաստացի ներդրվել է 651.6 մլն դրամ և շահագործման են հանձնվել 583.5

մլն դրամի աշխատանքներ (նշված ծավալում 150.1 մլն դրամի աշխատանքները իրականացվել են նախորդ ժամանակաշրջանում), ևս 68 մլն դրամի աշխատանքներ մնացել են անավարտ:

- համակարգչային տեխնիկայի և աքսեսուարների ձեռքբերում՝ 134.7 մլն դրամ արժեքով: Փաստացի ձեռք է բերվել 68.7 մլն դրամի համակարգչային տեխնիկա և աքսեսուարներ: Այս ուղղությամբ ներդրումները կատարվել են 51.0%-ով:
- գրասենյակային գույքի և կահույքի ձեռքբերման նպատակով փաստացի իրականացված նեդրումները կազմում են 71.3 մլն դրամ կամ նախատեսվածի 142.7%-ը:
- մեքենա-մեխանիզմների ձեռքբերման ուղղությամբ նախատեսված էր ներդնել 275.8 մլն դրամ: Այս ուղղությամբ ներդրվել է 308.3 մլն դրամ՝ նախատեսվածի 111.8%-ը:
- ներդրումային ծրագրով 2007 թվականին նախատեսվում էր հաշվապահական հաշվառման և կառավարման նոր ծրագրային փաթեթի ձեռք բերում՝ 140 մլն դրամ արժեքով: Այս ուղղությամբ փաստացի ներդրվել է 197.7 մլն դրամ (նշված գումարում ներկայացվել է նաև Microsoft ծրագրային փաթեթների լիցենզիաների ձեռք բերման ծախսերը՝ 20.06 մլն դրամ):
- այլ սարքավորումների ձեռք բերման ուղղությամբ ներդրվել է 104.6 մլն դրամ՝ նախատեսվածի 207.2%-ը:

Այս ուղղություններով ծրագրայինի նկատմամբ չհիմնավորված գերազանցումները կազմել են՝ 425.7 մլն դրամ, որոնք նույնպես ենթակա են նվազեցման սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

Ինչպես արդեն նշվեց 2007 թվականի ընթացքում ընկերության կողմից իրականացվել է 13432.3 մլն դրամի ներդրումներ: Ավարտվել են 11993.9 մլն դրամ ընդհանուր արժեքով աշխատանքներ, այդ թվում 925.5 մլն դրամի նախորդ ժամանակաշրջանում իրականացված ներդրումներ: 1438.0 մլն դրամի աշխատանքներ մնացել են անավարտ: Այս աշխատանքները ենթակա են նավազեցման ներդրումների ընդհանուր ծավալից, քանի որ այդ աշխատանքների արդյունքները դեռևս չեն

օգտագործվում լիցենզավորված գործունեության ընթացքում: Փաստացի իրականացված, ավարտված ներդրումների ծավալները ըստ ուղղությունների ներկայացված են աղյուսակում 5-ում:

ԱՂՅՈՒՍԱԿ 5

1	**2007 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ**	**13 432.3**	
2	**Ավարտված ներդրումներ**	**11 994.2**	
2.1	**Հանձնաժողովի աշխատակազմի կողմից չընդունված ներդրումների ծավալը, այդ թվում՝**	**782.3**	ենթակա է փոխհատուցման սակագնով
2.1.1	արտաքին լուսավորության աշխատանքներ	68.6	
2.1.2	սպառողների հաղորդալարերի և պատյանների փոխարինում	21.1	
2.1.3	արկղերի ձեռքբերման ուղղությամբ չիմնավորված ներդրումներ	288.6	
2.1.4	անհատույց ստացված հիմնական միջոցներ	57.1	
2.1.5	անհասցե աշխատանքներ	17.1	
2.1.6	ներդրումային ծրագրով չնախատեսված ներդրումներ	74.2	
	հրատապ ներդրումներ	76.7	
2.1.7	մինչև 25000 դրամ ծավալով ներդրումներ	7.8	
2.1.8	ասֆալտապատման աշխատանքներ (չիմնավորված)	171.1	
2.2	**Նախատեսված ներդրումների ծավալները գերազանցող չիմնավորված ներդրումների ծավալը**	**977.1**	ենթակա չէ փոխհատուցման սակագնով
2.2.1	սպասարկման որակի ցուցանիշների բարելավման ուղղությամբ նախատեսվող ներդրումների ծավալը գերազանցող ներդրումներ	672.8	
2.2.2	եռաֆազ ինդուկցիոն հաշվիչների ձեռքբերում	1.0	
2.2.3	հաշվիչների կապիտալ նորոգում	102.5	
2.2.4	գրասենյակային կահույքի ձեռքբերում	21.3	
2.2.5	մեքենա-մեխանիզմների ձեռքբերում	35.3	
2.2.6	հաշվապահական հաշվառման և կառավարման նոր ծրագրային փաթեթի ձեռքբերում	37.7	
2.2.7	շենքերի և շինությունների վերակառուցում	50.3	
2.2.8	այլ սարքավորումների ձեռքբերում	56.2	
3	**2007թվականի ընթացքում իրականացրած ներդրումներից սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ծավալը**	**10 234.8**	ենթակա է փոխհատուցման սակագնով